

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԿԵ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мѣсяцъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(յացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Սարգիս Մարտիրոսեան Նունուարեանց և Նատալիա Յովնանեան Նունուարեանց-
ները ցաւօք սրտի յայտնում են բարեկամներին և ծանօթներին առաջինը իր թանգա-
գին և անմոռանալի հօր, իսկ երկրորդը իր սկեսրայր՝

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐԿՍԵԱՆ ՆՈՒՆՈՒՓԱՐԵԱՆՅՈՒ

Երկարատե հիւանդութիւնից առաջացած մահը, որ տեղի ունեցում յունվարի 14-ին
Ամբիօքը չարաթ երեկոյեան, յունվարի 18-ին, երեկոյեան 6 ժամին. իսկ թողուն
յունվարի 19-ին, կիրակի օրը, առաւօտեան 10 ժամին, իր սեփական տնից՝ (Տօգովայա
հրապարակ) դէպի Ելմիածնեցոց ս. Գեորգ եկեղեցին և այնտեղից դէպի Խօջիվանքի
գերեզմանատուն:

1—3

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Համակրելի բարեփոխութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Մայրենի լեզուի մասին զեկուցում.
Դատաստանական դաշինքից, ժողովրդական
ներկայացուցիչներ Սե. Զաքարեան, Նամակ Կար-
սից, Նամակ Սուխուրից, Նամակ Խմբագրու-
թեան, Նամակ Խմբագրութեան, Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լու-
րեր.—ՀԵՆՈՒՄԻՆԻՆ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գրիգորեանայ քերական
Պարսկաստանում.

ՀԱՄԱԿՐԵԼԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒԹԻՒՆ

Մեր ընթերցողներին յայտնի է, որ
Ատրպատականի թեմը վերջին անգամ
ինքը կատարեց իր թեմական առաջնորդի
ընտրութիւնը: Թեմի պատգամաւորները
կազմեցին ժողով և այնտեղ քուէ տուին
իրանց ցանկացած թեմականին, որին հաս-
տատեց Վեհափառ Կաթողիկոսը:

Ատրպատականի թեմի ժողովուրդը այ-
նուհետև որոշեց բարեփոխել թեմի վերա-
բերեալ բոլոր գործադրութիւնը և մրտց-
նել այնտեղ որոշ կարգ ու կանոն, ուժե-
ղացնելով տեղական ժողովրդի մասնակցու-
թիւնը թեմական գործերի մէջ: Ժողովրդի
հասկացող մասը և հոգեւորական ներկայա-
ցուցիչները միասին մշակեցին մի կանո-
նադրութիւն թեմի գործադրութեան
մասին, որը և սկսեցին անմիջապէս զոր-

ծադրել կեանքի մէջ: Եւ ներկայումս Ատր-
պատականի թեմում արդէն սկիզբն է դր-
ված մշակված կարգերի իրագործութեան
համար:

Երբ մի երկու ամիս առաջ Ատրպատա-
կանի թեմական առաջնորդը եկել էր Թիֆ-
լիս, նա բերել էր իր հետ այդ կանոնա-
դրութիւնը ներկայացնելու Վեհափառին
և նրա հաստատութիւնը ստանալու հա-
մար: Կանոնադրութեան ծրագիրը ուսում-
նասիրութեան առարկայ դարձաւ և հմուտ
անձանց մի շրջանում, որտեղ նա եկեղեցի-
վեց մանրամասն քննութեան և իրաւաբա-
նական խմբագրութեան: Այդպիսով Ատր-
պատականի թեմում ծրագրված կանոնա-
դրութիւնը ստացաւ նոր մշակութիւն և
այնպէս ներկայացվեց Վեհափառին հաս-
տատելու համար:

Վեհափառը հաստատեց կանոնադրու-
թիւնը ժամանակաւորապէս, իբրեւ փորձ,
որպէս զի երկու տարի գործադրութեան
մէջ լինելուց յետոյ կարելի լինի պարզել,
թէ որքան նա նպատակայարմար է և
գործնական:

Մենք առիթ ունեցանք ուսումնասիրե-
լու այդ կանոնադրութիւնը: Նա ծրա-
գրված է համակրելի հիմունքների վրա,
մեծ տեղ է տալիս ժողովրդական ընտրու-
ղական սկզբունքին, հաշուետւութեան և
պատասխանատւութեան պահանջներին,
մասնաւոր է որոշ կարգ բոլոր այն գործառ-
նութիւնների մէջ, որոնք մինչև այժմ

էին ենթարկված ոչ մի կանոնի և միջոց
է տալիս տեղ հասցնելու ամեն մի բողոք,
ամեն մի օրինաւոր դանդաղ:

Անկասկած, գործնական կեանքը կը տալ
ցուցումներ այս կամ այն բարեփոխու-
թիւնը մտցնելու մշակված կանոնադրու-
թեան մէջ, բայց փոփոխութիւնները կը
վերաբերեն երկրորդական կետերին և ման-
րամասնութիւններին, իսկ հիմնականը և
էականը կը մնա նոյն լայն և ընդարձակ
ժողովրդական ընտրողական սկզբունքը
հրապարակական պատասխանատւութեան
սկզբունքի հետ միասին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ

Մայրենի լեզուի մասին զեկուցումը, որ
կարդացվեց երեքշաբթի օր, յունվարի 14-ին,
Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան
մէջ, գրուել էր ունկնդիրների մեծ բազմու-
թիւնով: Շատերը արժանանալի չէին համար
համար և կանգնած էին:

Զեկուցանողը, Սուլթան-Կրիմ-Գրիգոր, կազ-
մել էր իր զեկուցումը խորհրդակցելով ձեռն-
հաս անձերի հետ: Բազմաթիւ վկայութիւննե-
րով և խորհրդածութիւններով նա ապացուցա-
նում էր, որ մայրենի լեզուին պէտք է տրվի
բացառիկ գերազանցութիւն սկզբնական կրթու-
թեան մէջ և յաջորդաբար փոխարինվի պետա-
կան լեզուով:

Եղբակացութիւնները, որոնք գրված էին
ժողովականների ընտրութեան, հետեւեալներն էին:
Տարրական դպրոցներում, որտեղ ուսումնա-
ւանդութիւնը տեւում է երեք տարի, դարձնել
չորս տարի և կարգադրել այնպէս, որ առաջին
երեք տարվայ ընթացքում դասաւանդութիւնը
լինի մայրենի լեզուով, իսկ չորրորդ տարին
սեռական լեզուով: Իսկ այն դպրոցներում,
ուր դասընթացը հնգամիայն է, դարձնել
վեցամիայն և առաջին չորս տարին դասաւա-
նդութիւնը կատարել մայրենի լեզուով, իսկ
վերջին երկու տարին պետական լեզուով:
Տարրական դպրոցում պետական լեզուն պէտք

է լինի դասական առարկայ, որի դասաւանդու-
թիւնը պէտք է սկսվի առաջին տարվայ երկ-
րորդ կէսից: Այն տեղերում, ուր մի քանի լե-
զուներ կան, գերադասութիւն տալ այն լե-
զուն, որով խօսում է աղքատնականութեան մե-
ծամասնութիւնը: Տարրական դպրոցներում
ցանկալի է կազմակերպել ընթերցարաններ,
ուր ժողովված լինէին գիւղատնտեսութեան
վերաբերեալ գրքեր, թանգարաններ, որոնց
մէջ զետեղված լինէին գիւղատնտեսական
գիտելիքներին նպաստող ժողովածուներ և
առարկաներ: Կազմակերպել տարրական գըպ-
րոցների ուսուցիչների համագումար ժողով-
ներ և բանալ գիւղատնտեսութեան վե-
րաբերեալ ժամանակաւոր դասընթացներ,
վերջապէս հոգ տանել, որ գաղութական ուսու-
ցիչների նիւթական վիճակը աւելի ապահով-
ված լինի, քան ներկայումս է:

Զեկուցման առիթով խօսեցին շատեր՝ Բու-
տուի, Պերեյոգոնի, Լիսիցեան, Գոգերա-
չիլի, Նատրոսի, Ալիբեյով, մասնադական
Շէյխուխանով, Քալանթար, Սահակեան, Սուր-
գուլաձէ, Չելոկանով, Ամիրաջով, Տրեգուլով, և
ուրիշները: Զեկուցման ընդհանուր միտքը հա-
մակրութիւն գտաւ բոլորի կողմից:

Ժողովը երկար քննադատութիւններից յետոյ
որոշեց ընդունել զեկուցման բոլոր կէտերը,
բացի այն կէտից, որ վերաբերում է խառն
ազգաբնակչութեան մէջ բազմած գաղութներին:
Այս վերջին կէտը որոշվեց բոլորովին դուրս
ձգել:

Հանդիսականները յայտնեցին իրանց յար-
գանքը զեկուցանողին ծախսարութիւններով
ժողովը փակվեց ժամի 11-ին:

ԴԱՍԱՍԱՆԱԿԱՆ ԴԱՂԻՃԻՑ

Յունվարի 14-ին Թիֆլիսի դատաստանական
պալատի քաղաքացիական առաջին բաժնում
քննվում էր Կովկասի ուսումնարանական շըր-
ջանի հոգաբարձուի ներկայացուցիչների գրաւած
իր ուսումնարանական սեփականութիւն հայոց
եկեղեցական կալուածներից երեքը գործը, այն
է՝ դպրոցների փակումից յետոյ կարտուած եղի-
չէ վարդապետի օրով չինված 10 կրպակների,

Եւ համարեա բոլոր գիւղերը մասնավոր են
այդ ծանց հարկերին և չարքաւ աշխատանքնե-
րին, մի տեղ աւելի, մի տեղ քիչ պակաս չա-
փերով: Եւ այսպէս, գիւղատեղի աղաները, որ-
պէս տղուկներ, քաւում, ծծում են թշուառ
գիւղացու արեւը և գցում թշուառութեան
գիրկը: Միակ միջոցը, որ նա գիտէ, այդ սյան
գիտելն է: Եւ նա պահպանում է Այծի շատ
սուղուցիչներ դաղթել և ընտելութիւն են հա-
տատել երեան, Մարաղա, Թաւրիզ և այլն, իսկ
այժմեան ընտելիները մեծ մասամբ եկել են
Քիրմանից և Սպահանից:

Այդ բոլորը մի կողմից, քերթ աշխրթների
պարբերաբար կրկնվող աւարատութիւնները և
կողոպուտները միւս կողմից, աւելի ու աւելի
վերքեր են առաջացնում, ստեղծում են մի
թշուառ և ստրկացած տարր: Չանազան քերթ
ցեղեր իրար հետ ընդհարվում են և խեղճ գիւ-
ղացիներն են մէջտեղում տուժում, նրանք
հարստահարվում, մնաւում:

Յաճախ կրկնվող բռնաբարոյեաները և առե-
ւանդումները գալիս են պատկերի պակասը
լրացնելու և ամեն ինչ կատարեալ կացուցա-
նելու վայ նրան, որ ունի գեղեցիկ հարս կամ
աղջիկ, գիւղատեղը ամեն միջոցներ ձեռք է
առնում տիրանալ, խլել նրան, շատ անգամ,
ի հարկէ, բռնութեամբ: Այս երեւոյթը անցեա-
լում յաճախ, չուտչուտ էր կրկնվում, բայց
այժմ, ինչպէս պատմում են, երբեմն-երբեմն է
տեղի ունենում:

Ահա ինչպիսի խայտառակ պատկերով են
ներկայանում մեզ այդ անկենի մոտացված
հայերը:

Բայց այդ չէ բոլորը

(Կը շարունակվի)

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՔՐԻՍՏՈՆԵԱՑ ԳԻՒԴԵՐԸ ՊԱՐՍԿԱՍԱՆՈՒՄ

I

Միթէ քրիստոնէայ քերդեր կան, անշուշտ
դարմացած կը բացականչէ ընթերցողը: Այո,
այն էլ բաւական ստուար թւով:

Ինչը գիտե՞ք, որ պարսկաձայերը, որպէս
փշրանքներ, ցրված են Պարսկաստանի գրեթէ
բոլոր մասերում, մասնաւոր հիւսիսային Պարս-
կաստանի, այսինքն Ատրպատականի ընդար-
ձակ նահանգում: Եւ այդ փշրանքները, հայ
ազգի այդ բնկորները, լինելով հողաղուրդ,
ընկած ընկի զօրեղ տարրի մէջ, որոնք կաղ-
նված են մի աննշան տոկոս ընկիների հետ
համեմատած, մասնավոր թշուառութեան
թեման և անուշադրութեան, անպայման կանգ-
նած են զրանք կորստի անխուսափելի ճանա-
պարհի վրա և կամաց-կամաց, ժամանակի ըն-
թացքում ձուլվում, կուլ են գնում տեղական
զօրեղ ազգաբնակչութեան և միանգամայն կեր-
պարանափոխվում, կաղնում են բոլորովին մի
ուրիշ բան:

Այսպիսի գրութեան մասնավոր հայեր չա-
կան Պարսկաստանի զանազան խուլ անկիւն-
ներում, բայց մենք այս անգամ խօսելու ենք
միմիայն այդ անկիւններից մէկի մասին, որ
աւելի դան, աւելի քստմեկի պատկերով է
ներկայանում մեզ, աւելի մոտիկ է կանգնած
անգլոնդին և թշուառութեան սուր ճանկերը
աւելի մոտ է նրա մար մէջ, քան մնացած
բոլոր անկիւնները:

Այդ անկիւնը պարսկական Քիւրդստանն է:
Այս հին և պատմական Մարասանի մէջ և

չրվակայքում ապրում են մի բուն հայեր,
որոնք ցրված են գլխաւորապէս Սուլթան-
Արանդուղ, Սուլթան-Բուլդ և Միանդուար
գաւառամասերում: Շատ չեն այնտեղ հայերը,
բայց քիչ էլ չեն, մօտ 2551 հոգի:
Բարանդուղը ունի 10 գիւղ 203 տ. 1251 բն.
Սուլթանդը » 9 » 120 » 700 »
Սուլթան-Բուլդ(չրվակ), 4 » 160 » 304 »
Միանդուար » 5 » 53 » 296 »

Գումար 28 գիւղ 436 տ. 2551 բն.:

Այդ անկիւնի հայերը, ինչպէս տեսնում էք,
ցրված են 28 գիւղերում և ապրում են խառ-
քերդերի հետ, որոնք կազմում են ազգաբնա-
կութեան մեծագոյն մասը: Կան այդ մասերում
նաեւ փոքր չափով կարափառախ թուրքեր, ա-
սորիներ և հրէաներ:

Հայերը հողաղուրդ և ուղիւս ժողովուրդ են,
նրանք չունեն սեփական հողեր, գրեթէ սե-
փական ոչինչ, կեղեքվում, հարստահարվում
են, տնքում են ծանր հարկերի տակ, որոնք
հասնում են առասպելական աստիճանների և
յետ չեն մնում Ուրմիում տիրող հարկերից:
Եւ նա, այն տարրը, թշուառանում, քաջալը-
վում է տնտեսապէս և մի ցաւալի պատկեր
ներկայացնում: Այդ բոլորը չնորհիւ գլխաւո-
րապէս տիրող հարկերի, և թշուառութիւնը
այն աստիճանով է թագաւորում հայերի մէջ,
որ շատ ընտանիքներ գուրկ են օրվայ չոր հա-
ցից:

Այդ հարկերի մասին գաղափար տալու հա-
մար առաջ բերենք Սուլթանդ գաւառի նաջագէ
գլխաւոր գիւղի հարկերի ցանկը, որի նման
են, շատ քիչ տարբերութիւններով և միւս մա-

*) Այս թւերը վերցրել ենք առաջնորդարանի
կազմած վիճակագրութիւնից:

սերում. 1) Իւրաքանչիւր տանից 4—5 զուան
հարկ, 2) 5 հաւ, 3) իւրաքանչիւր կովից 2
զրան, 4) ձու, իւր, պանիր, ինչքան կամենայ
գիւղատեղի աղան, 5) մի գումշից 3 զուան, 6)
մի ձիուց 3 զուան, 7) ցորենի, գարու և բրին-
ձի 2/3 մասը աղային է, 8) բամբակի ցանքի
մէկ թմանֆին *) 12 զուան, 9) այւոյտի 12
զուան, 10) այդիւրի 12 զուան և այլն:

Ահա ինչ սարսափելի հարկեր էլ ինչ է մը-
նում խեղճ աշխատող ժողովուրդին. նա չարչա-
րում, արիւն-քրտինք է թափում և դրա ար-
դիւնքը մեծագոյն մասը գնում է գիւղատեղի
աղայի ամբարը. էլ ինչ միտք ունի տանջել,
աշխատել, և իսկապէս այդ թշուառ անկիւնի
մի քանի մասերում ժողովուրդը գործ չունի
հողի հետ, նա էլ պարսպում երկրագործու-
թեանը, այլ իր պարէնը հայթայթում է Կով-
կաս և Ռուսաստան պահպանելով կամ մշա-
կութեամբ պարտաւելով:

Բայց այդ չէ գեո բոլորը, աւելի անտանելին
գեո մնում է. այդ բեղուն է, ձրի աշխատան-
քը: Այդ վարդիւեալ գիւղի իւրաքանչիւր ըն-
տանիքը պարտաւոր է տալ տարեկան 25—30
բէգար: Դեռ սա ամենաքիչն է տալիս. տեսէք
Մանաշքեար գիւղը. նրա իւրաքանչիւր ըն-
տանիքը տալիս է մօտ 200 բէգար:

Կատարեալ ճորտութիւն...
Գիւղացիները գրեթէ տարվայ մեծագոյն
մասը աշխատում են ձրիաբար գիւղատեղի ա-
ղաների համար: Գիւղատեղերի արտերը գիւ-
ղացիներն են ջրում, նրանց շինութիւնների
վրա գիւղացիներն են աշխատում, գիւղացի-
ներն են ծնծում աղայի բրինձը, գիւղացիներն
են մաքրում աղայի կտուրները և բակի ձիւնը
և այլն և այլն:

*) Թմանֆը=64 քաակուտի արշինի:

յաջորդարանի և հոգևոր կառավարութեան, Կաղապարի հինգ արդիւնքի և Վարդապետի Հայրապետական վարչական թուականներն յառկապէս սինթէզի պրոպագանդայի համար կառուցած տան, որի մի մասն մէջ երկու տա-
րի միայն զետեղված էր Վարդապետի եկե-
ղեցական-ծխական դպրոցը Վեհապետ Կաթո-
ղիկոսի թոյլտուութեամբ:

Նախագահում էր քաղաքացիական մասի
նախագահ Պետրոսյանը, զեկուցանում էր
անդամ Ուսնելով և ներկայ էին Յէրաման և
պրոկուրորի օգնական Սամսոն Դպրոցական
կարգութեան կողմից և եկել էր Կարսի ժողովուր-
դական դպրոցների տեսուչ պ. Դեմիտրի, իսկ
հայոց հոգևորականութեան կողմից՝ Եղիշէ վար-
դապետ Մուրադեան և Սամսոն Յարութիւ-
նեան:

Գործի զեկուցումից յետոյ՝ հոգևոր իշխանու-
թեան չափերի պաշտպան երդուեալ հաւատար-
մատար Սամսոն Յարութիւնեան պարզեց,
որ Կարսի կառուածները դպրոցների փակման
ժամանակ գոյութիւն չունէին և դպրոցների
փակումից 4—5 ամիս յետոյ միայն հոգևոր
իշխանութիւնը տե՛ր եղաւ այն հողաբաժնի,
որի վրա կառուածներն են յիշեալ շինութիւննե-
րը: Հետագայ դպրոցների փակումից յետոյ
և դեռ 1898 թուի սեպտեմբեր ամիսն չա-
ւարտած շինութիւնները չէին կարող որ
և է դպրոցի սեփականութիւն լինել և այն
էլ սեփականութիւն, որպէս իրաւաւորման
կան մարմին, մասնաւոր որ համաձայն օ-
րէնքի՝ հայոց եկեղեցական ծխական դպրոցնե-
րը սեփականութիւն էին վարչերի և եկեղեցի-
ների և որպէս անկախ իրաւաւորական մար-
մին գոյութիւն չունէին վերջապէս իր խոս-
քը որ դպրոցական փարէսութեան տեղական
ներկայացուցչի վարմունքը ապօրինի է միան-
գամայն և հիմնված են թաղապետութեան վրա
միայն, որ հոգևոր իշխանութեան և եկեղեցու
իրաւունքները յիշեալ կառուածների վրա ան-
վիճելի են, որ Կաղապարի աղբիւրը եկե-
ղեցու սեփականութիւն էին կազմում դեռ
թիւրքաց տիրապետութեան ժամանակներից,
երբ Կաղապարում դպրոց անդամ չը կար,
որ բոլոր հիմնարկութիւնների և մատենա-
ների մէջ յիշեալ աղբիւրը նշանակված
էր որպէս եկեղեցուպատկան և դպրոցների եր-
բեմն միայն և այն էլ հոգևոր իշխանութեան
թոյլտուութեամբ օգտվել են եկամտաւորից և
որ այդ հանգամանքը չէ գրկում սեփականա-
տիրոջ իր իրաւունքներից, նոյնը ապացուցա-
նելով և Վարդապետի Հայրապետական
տան վերաբերութեամբ և ներկայացնելով հա-
կաւոր վաւերացումներ, պ. Յարութիւնեանց
խնդրեց դատաստանական պալատից հանել
յիշեալ կառուածները Կոլկասի ուսումնարանա-
կան շրջանի հողաբաժնու իրաւասութիւնից և
վերադարձնել հոգևոր իշխանութեան:

Դրոցական վարչութեան ներկայացուցիչ պ.
Դեմիտրի առարկութիւններից յետոյ պրոկու-
րորի օգնականը երեք գործի ժամանակն էլ
գտնաւորով դատարանին, ասաց հետեւեալը. «Այս
դատարաններ, ես իմ կողմից միանգամայն
ապացուցած համարելով հոգևոր իշխանութեան
իրաւասութիւնը ներկայ լինելի կառուածների
վրա, խնդրում եմ ձեզանից հանել յիշեալ կա-
ղապարի դպրոցական փարէսութեան իրաւասութիւ-
նից և յանձնել հոգևոր իշխանութեան»:

Դատարանները կարճ խորհրդակցութիւնից
յետոյ յայտնեցին, որ այդ գործերի վիճիւրը կը
յայտարարվի չաքաթ օրը՝ ամիս 18-ին:

ԺՈՂՈՂՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ՍԵՒ
ՔԱՂԱՔՈՒՄ

Հայերէն երաժշտական-դրամատիկական երե-
կոյին, որի մասին արդէն գրել եմ, յաջորդեց
զեկուցումների 8-ին ուսերէն երաժշտական-
դրամատիկական երեկոյն, որի կատարեալ ա-
րողութիւնը յետ չը մնաց նախկինից: Դեկտեմ-
բերի 13-ին հայկական խումբը տուեց առա-
ջին անգամ յետաձգված «Նոտանկան գողտ-
նիքը»: Արողութիւնը խաղի կողմից միջակ էր,
աչքի էին ընկնում իրանց խաղով պ. պ. Հասան-
Ջալալեան, Սերաբակեան, Թաւարէկեան և
տիկ. Արտեմեան:

Դեկտեմբերի 15-ին ուսաց խումբը մի չը
տեսնված աշողութեամբ ներկայացրեց «ՕՅԵ-
ԿԱԿԵ, ԴԱ ՈՅ ԳՐԻՔԵՏ» պիեսը, որի մէջ բոլոր
դերակատարները մի առանձին ոգևորութեամբ
միմանց հետ մրցում էին և հիացած հասա-
րակութեան անսպասելի բաւականութիւն պատ-
ճառում:

22-ին նորից երաժշտական-դրամատիկական
երեկոյ էր. օր. Ալիսանեան, պ. պ. Կոզել, Բա-
լակլին և Կունչեկո աշող կատարեցին Ալէք-

սանդր Ֆրեյսիի քառամասն նուագումը, ապա
առաջին երեքը Գլինկայի «СОНЪИ»-ն—trio
և մի քանի մտիլլեր առանձին: Ապա խաղա-
ցին պ. Ա. Արէշեանի «Նաւթի ֆոնտանը», որը,
ինչպէս ժամանակակից և բոլորին ծանօթ երե-
ւոյթ, մեծ բաւականութիւն և ծիծաղ պատ-
ճառեց հասարակութեանը: Առանձնապէս լաւ
էին օր. Գրիգորեան, պ. պ. Լ. Մ. Մաղապեան
և Շահգիզեան:

Նոյեմբ 1902 թուի վերջը, զուարճութեան
օրը՝ կիրակի, դեկտեմբերի 29-ն էր: Այս ան-
գամ զուարճութիւններ նախաձեռնողները ա-
ւելի էին ընդարձակել իրանց ծրագրերը, ցերեկը
կազմակերպել էին մանկական առաւօտ, որ իր
բազմակողմանի ծրագրով և լաւ կազմակեր-
պութեամբ անպիսի մի ոգևորութիւն և զուար-
ճութիւն պատճառեց փոքրիկ հասարակու-
թեանը, ինչպիսին խեղճներ երեկ շատ քիչ են
տեսել: Եւ ով ծանօթ է Բագուի տարօրինակ
և բացառիկ պայմանների հետ, թէ ինչպէս ե-
րեսները միշտ գրկված են որ և է օրինաւոր
զուարճութիւն և բաւականութիւն ստանա-
լուց, նա միայն կը զգայ և կը գնահատէ
այդպիսի առողջ, կենսաբար զուարճութիւն-
ների արժէքը: Սկզբում փոքրիկ երեխաները
ջութակի և վիոլոնչիկի վրա նուագեցին «ման-
կական» աշողութեամբ մի քանի երաժշտական
մոտիվներ և արժանացան իրանց հասակակից-
ների բուռն ծափահարութեան և կեցողներին
Ապա սիրողները մի քանի երեխաների հետ
ներկայացրին գերմաներէնից թարգմանած բա-
ւական հետաքրքրական «Լեւնային ողի» ման-
կական պիեսը, որի մէջ մի չը տեսնված աշո-
ղութիւն ունեցաւ առանձնապէս տեղական ա-
ռուարկան Մ. Քալանթարեանի որդի 10 տա-
րեկան Յակոբը: Նրա խօսակցութեան տոնը,
ձևերը, շարժումները, բեմի վրա իրան ազատ
պահելը և դերն իսկ լաւ իմաստով, անխեղձ
ենք ասում, կամայապէս մեր շատ պրօֆես-
սիօնալ դերասաններին Մայրէ մի ծայր վիճը
դա՛նչ լինէր, որ մանկական գլուխների մի ծով
էր ներկայացնում, անվերջ զորութեամբ էր ծա-
փահարութիւնների, կեցողների բացակայու-
թիւնների և ուսանելի աղբիւրներից: Ներկա-
յացման վերջում գրեցին մի քանի աշող կեն-
դանի պատկերներ և ցերեկվայ ժամը 4-ին
դա՛ն, ուրախ և զուարթ փոքրիկ հասարա-
կութիւնը ցրվեց, տանելով իր հետ ամե-
նաքաղցր յիշողութիւններ իրանց մասին
հոգացողների մասին: Կրկնում ենք, երե-
կաները, մանաւանդ չաքաթ դատակարարի,
այստեղ այնպէս են գրկվել և մոռացված, որ
անհրաժեշտ է այդպիսի կենսաբար զուարճու-
թիւններ յաճախ կազմակերպել:

Երեկոյան ուսաց խումբը ներկայացրեց
«Каширская Старица» դրաման, տոմարները
առաւօտից սպառված էին: Ուսաց խումբը
ունի մշտական լաւ ոյժերի մի փունջ. օր.
Տիխաչեւ, տ. Մարկովսկայա, Երմոլինա,
պ. պ. Լիովինով, Կոստին, Երմոլին, Փոն-Վարն-
էկ, որոնք միշտ մի անմասն աշողութեամբ
անց են կացնում ներկայացումները: Տարին
վերջացաւ, նոր տարուց սկսվելու է, կամ
ճիշտ ասած, շարունակվելու է զուարճութեան-
ների այդ շարքը. ցանկանք ետանք և կատա-
րեալ աշողութիւն:

Թուրքերէն ներկայացումները դեռ չեն սկըս-
վել՝ չորսիւ թուրք երիտասարդութեան ան-
հոգութեան, ցուալի է երեկոյն Բագուում
այնքան ինտելիգենտներ կան, որ կարելի է և
պէտք է զարկ տալ և թուրքերէն ներկայա-
ցումներին:

Ռ. Յովհաննանեանց

ՆԱՄԱԿ ԿՐՍՈՒՑ

Յունվարի 4-ին

Մեր նախկին թղթակցութիւններից մէկում
յայտնել էինք, որ այստեղի քաղաքային տա-
րական դպրոցի աւագ ուսուցիչ պ. Յ. Թա-
լանեանի աշխատութեամբ ժողովրդական
դպրոցների տեսուչ պ. Վ. Դեմիտրի թոյլ
տուեց հայերէն էլ դաստիարակելու այստեղի
կիրակնօրեայ դպրոցի աշակերտներին, որոնք
բացառապէս հայեր են. այժմ նոյն պ. Թա-
լանեանը երեխաների ծնողների կողմից դի-
մել է պ. Դեմիտրի և թոյլտուութիւն ստացել
հայերէն դասերի թիւը աւելացնելու քաղա-
քային տարրական դպրոցում (որտեղ մօտ 300
աշակերտներից 238-ը հայեր են), այն է նախ-
կին չաքաթական կրօնի և հայերէնի վեց դասի
փոխարէն (բոլոր բաժանմունքներում)՝ միայն
18 դաս, որը երեկ կը յանձնվի մի ձեռնհաս
ուսուցչի Յայտնում ենք մեր խորին շնորհա-
կալութիւնը պ. Թալանեանին և ցանկանում,
որ շատ հետեւողներ ունենայ: Այս ուղարկալի

երեկոյթը արձանագրելուց յետոյ՝ չենք կարող
թաղանթ հետեւալ տխուր երեկոյթի մասին,
որ տեղին երեքշաբթեան քաղաքային դպրոցում
հայերէնի դասերին հայ-կաթօլիկ երեխաները
շատ անգամ փախչում են, առարկելով թէ
ծնողները չեն թոյլ տալիս, որ լուսաւորչական
ուսուցչից նրանք հայերէն սովորեն: Ել ինչու
են մեր կաթօլիկ վարդապետները փակվել ի-
րանց խցերում և այդ անմիտ, բայց վարակիչ
և վնասակար չարքիք առաջը չեն առնում:

Մեր արձանագրածը, այդ տխուր երեկոյթի
մասին, մտացածին չէ, այլ իրականութիւն,
քանի որ պատմել է հենց ինքը դասաւորում
Հրաւիրում ենք բարեկրօն հայերի ուղարու-
թիւնը այդ բանի վրա և յուսով ենք, որ շու-
տով արմատախիլ արած կը տեսնենք այդ վը-
նասակար քաղաքաւոր մանուկների քրտիկը:

ՆԱՄԱԿ ՍՈՒԽՈՒՄԻՑ

Դեկտեմբերի 28-ին

Չորս տարի առաջ մեր տեսած Սուխումը
մեծ փոփոխութիւն է կրել. տների և խանութ-
ների թիւը անհամեմատ չափով աւելացել է,
բնակիչները—սոսնայէս: Ամբողջ քաղաքում թէ
առետրի և թէ շինութիւնների աչքի ընկնող
մասը պատկանում է բնականաւոր ունեւորնե-
րին, որոնք կամ նախկին բնակիչներ են և
կամ վերջին պատերազմից անմիջապէս յետոյ
եկել և այդտեղ որ և է գործի հիւճ են գրել:
Ահա այդ վաճառական-կալուածատէրերն են,
որ մի կողմից տարեց-տարե աւելացնում են
իրանց շինութիւնների վարձը, իսկ միւս կող-
մից իրանց կապիտալով ճնշում են մանր վա-
ճառականներին:

Քաղաքի մէջ կալուածատէրերի մեծ մասը
վրացիներ են, յետոյ յոյներ, ռուսներ և ապա
հայեր: Դրանք մեծ մասը իրանց կրթութեամբ
և դարգացողութեամբ սովորականից էլ մի բան
պակաս և մինչև իսկ անգործեալ մարդիկ են:
Բայց ինչ կանես, ժամանակակից բախտը
փողն է, իսկ փողը երբեք չէ սրբում աչքա-
բացներին: Ի հարկէ, մեր խօսքը վերաբերում
է խղճով և պարտաճանաչ աչքաբացներին:

Առետուրը, համեմատած Կովկասի միւս քա-
ղաքների հետ, բաւական լաւ է այստեղ: Ի
թիւս այլ առետրական հիմնարկութիւնների,
այստեղ թէ տեղական բնակիչներից և թէ շըր-
ջակայ հայերից միացած ոյժերով մի խնայու-
ղական ընկերութիւն է հիմնվել՝ «ЭКОНОМИЧЕС-
КОЕ ОБЩЕСТВО» և մի մանրավաճառի խանութ են
բացել, որի կառավարիչն է պ. Յ. Մուրադեա-
նը: Ինչպէս պ. Մուրադեանը պատմեց, ընկե-
րութեան գործը այնքան էլ նախաձեռնել ըն-
թացը չունի, և այդ նա բացատրում է նախ-
հայերի մէջ ընկերակցական հոգու թուլու-
թեամբ և երկրորդ՝ որովհետեւ ընկերութեան
նպատակը շատերի կողմից դեռ լաւ ըմբռնված
չէ: Շատ ցաւալի կը լինի, եթէ այնքան նե-
ղութիւններով դուռն բերած այդպիսի մի գե-
ղեցիկ գործը չաղողվի մեզ առաջ տանել, ինչ-
պէս հարկն է, ասում է նա տխուր ձայնով:

Ուրիշ կողմից, որքան մենք նկատեցինք,
այստեղի հայերի մէջ, ինչպէս և ուրիշ շատ
տեղերում, որտեղ բնակիչների մեծ մասը զա-
նազան կողմերից եկած անհատներից է լինում
կազմված, մինչև որս դեռ չէ աղողվել կազմա-
կերպելու մի միութիւն, այսինքն անհամեմատ
կազմված իրար հասկացող հասարակութիւն,
որը կարողանար արձագանք տալ որ և է
հասարակական հարցի հրապարակ եկած
ժամանակ: Բայց յոյս կայ, որ երկար
չի տե՛ր այդ գրութիւնը. ինչպէս պատ-
մեցին, այստեղի հայերի մէջ արդէն միտք
է յղացել մի հայոց եկեղեցի հիմնելու, որի
համար արդէն բանակցութիւններ են սկսված
Քուրթալի գործակալ Եարախանց քահանայի
հետ: Թէ քաղաքի մէջ և թէ չընկալվեալ քա-
ղաքի հողի վրա գտնվող հայերի թիւը հա-
նում է մօտ 2,000-ի. անկասկած, այդքան հայ
բնակիչ ունեցող մի տեղի համար անհրաժեշտ
է եկեղեցին:

Այս կողմերում, ի թիւս այլ ցեղերի, քաղա-
քից 5—10 վերտի վրա, կան նաեւ երեք գիւ-
ղեր, որոնցից երկուսի բնակիչները էստօնա-
ցիներ են, միւսն իտալից գաղթած, իսկ եր-
րորդին՝ գերմանացիներ, որոնք պարագլուխ
են բացառապէս անային կենդանիներ պահելով
և այլ գիւղատնտեսական միջոցներով արդիւ-
նաբերութեամբ: Այստեղ քաղաքի մէջ գտնվող
մի մեծ հրապարակում գրեթէ ամեն օր կը
հանդիպենք մի քանի տասնեակ սայլակներ, ո-
րոնցով նրանք, մեծ մասամբ կանաք, զանա-
զան միջոցներ են բերում: Մարդ հենց նայե-
լուն պէս իսկոյն հասկանում է, որ դրանք մեր

կողմերի սովորական ժողովրդից չեն, և այդ ոչ
թէ իրանց արտաքին տեսքով, այլ իրանց գոր-
ծունէութեան խելացի եղանակով: Ո՛վ կարող
համոզել տխմար երկշտութիւնը քաղաքակա-
րութիւն և համեստութիւն համարող մեր հայ
գեղջկուհուն, թէ կարելի է շատ պատւաւոր լինել
տունը հետը խօսած ժամանակ երեսը միւս
կողմը դարձնելու և ազատ կերպով իր տան
մէջ արդիւնաբերած միջոցները տանել քաղաք
կամ մօտակայ կայարանները՝ նրանց փող
դարձնելու համար:

Եւ իրաւ, ով ուղարկութիւն է դարձրել մեր
գիւղական ժողովրդի ներկայ գրութեան վրա,
նա անկասկած նկատած կը լինի այն տխուր
հանգամանքը, որ մի կողմից հազար ու մի
վէճերի և այլ պետական գործերի համար տան
տղամարդի դէս ու դէն քաջկրօններ և հետեա-
պէս շատ քիչ ժամանակ ունենալը՝ իր ազ-
րուտի մասին կարգին հոգ տանելու համար,
իսկ միւս կողմից նրա ամուսնու անընդունա-
կութիւնը՝ որ և է գործունէութեամբ մի քանի
կօպէլ վատակելու Մինչև որ հայ կինը չա-
գատվի իրան կաշկանդող տխմար նախապա-
շարմունքներից և իր լծակցի հետ հաւատար
կերպով հոգ չը տանէ իր ապրուստի մասին,
մենք երբեք չենք կարող բարեփոխված տեսնել
մեր գիւղական ժողովրդի գրութիւնը:

Գ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Դեկտ, յունվարի 10-ին

«Մշակ»-ի № 1-ի ներքին լուրերում Դեկա-
րից տպված էր Գրիգոր Սրբորունու հոգեհան-
գատի մասին, ուր ասված էր թէ հոգեհանգս-
տին երկու տարօրինակութիւն տեղի ունեցաւ:
առաջինը, որ եկեղեցում ժողովուրդ չը կար,
երկրորդը՝ իբր թէ հայր Խ. Շաթիրեանցը իր
երկար ճառով ոչ միայն ձանձաբացրեց ժողովու-
րին, այլ և չեղվելով նիւթից, խաչաւ ստուեր
ձգեց Սրբորունու գործունէութեան վրա և իր
բովանդակութեամբ քարամարդեց հ. փոխանորդ
թովմայ վարդապետին:

Գալով եկեղեցում ժողովուրդ չը լինելուն,
յայտնում եմ, որ սուտ է. հաշւած կար երկ-
սու մօտ 90 մարդ, իսկ իմ ճառի մասին տըպ-
վածի վերաբերմամբ կանսմ, որ քա անձնա-
կան, ստոր զիտուններով գրված մի անբարե-
խիղճ գրապարտութիւն է, որովհետեւ ես հոգեւոր
իշխանութեան թոյլտուութեամբ խօսել եմ մօտ
կէս ժամ, որը շատ քիչ է Սրբորունու կենսա-
րութիւնը և գործունէութիւնը պարզելու հա-
մար, ես երբեք չեմ չեղվել նիւթից և ստուեր
չեմ ձգել Սրբորունու գործունէութեան վրա,
այդ կարող է հաստատել ներկայ գտնված հա-
սարակութեան թոյլտուութեամբ խօսելու երեսն
հանրու համար խնդրում եմ հ. փոխանորդին
հրապարակօրէն յայտնել իմ ճառը, որի մա-
սին նա շատերի ներկայութեամբ ասել է, թէ
լաւ էր պատրաստված, ինչ գարմացում արտ-
ճառեց իրան. երկրորդ՝ հ. փոխանորդի անու-
նից խօսող թղթակցին առաջարկում եմ հրա-
պարակօրէն բացատրել, ես ինչ կէտում չեղ-
վեցի նիւթիցս և ինչ ստուեր ձգեցի Սրբորու-
նու գործունէութեան վրա և ինչուսմ էր կա-
յտնում հ. փոխանորդին քարամարդեց:

Գալով թիւն չէ ճշմարտութիւնը խելագիւ-
րելով գործին անտեղեակ խնդրութիւնը
մոլորեցնելու ու արեւելու. չողորմութիւն և
արշի վերաբերմամբ կանսմ, որ քա անձնա-
նորդին, որից հեշտ կարելի է գուշակել թղ-
թակցի ինչ դատակարարից լինելը, այլ քալու-
թիւն և հրապարակօրէն պաշտպանել իր գրա-
ծը. այն ժամանակ ես էլ կապացուցանեմ, որ
այդ թղթակցութիւնը մի երկու խաւարի հո-
ղիներէ գործ է, որոնք ոչ միայն հակառակ էին
Սրբորունու հոգեհանգստին և իմ՝ Սրբորունու
ժողովրդին ծանօթացնելու, այլ նոյն իսկ այ-
սուհետեւ էլ կամենում են նամանորին զեպ-
բերում ինձ արգելք հանդիսանալ: Սպա-
սում եմ:

Խ. քահ. Շաթիրեանց

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, յունվարի 9-ին

Շատ մարդ կարծում է թէ Շուշուց «Մշակի»
մէջ «Արցախեցի» ստորագրութեամբ յօդուած-
ներ գրողը ես եմ: Ի գիտութիւն երևակայու-
թեամբ ես թաղապետութիւն անողների և ի խոյս
զանազան թիւրիմացութիւնների պարտք եմ
համարում հրապարակով յայտնել, որ «Արցա-
խեցի» ստորագրութիւնը իմ գրչին չէ պատ-
կանում:

Մ. Տէր-Սարգսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարզելու համար այն պատճառները, որոն-
ցից առաջացել էր մարդատար գնացքի խոր-
տակումը Ալեքսանդրօպօլ-Երևանեան գծի վրա,
թիֆլիսից աղէտի տեղը ուղղորդեց մի առան-
ձին տեխնիկական մասնագետով, իսկ Երևանից
— դատաստանական իշխանութիւնները:

Անդրկովկասեան երկաթուղու վարչութիւնը կարգադրել է այսուհետեւ մինչև նոր տնօրինութիւն անելը չը ծախել տոմսակներ երևանեան գծի համար, որովհետեւ ձեռնարկուածները Անի-Արագած կայարաններէ մինչև հետգնեակէ անտեղանում են և այժմ չէ՛ն կարելի որոշել, թէ երբ հնարաւոր կը լինի մաքրել ճանապարհը:

Հաստատ աղբիւրից մեզ հաղորդում են, որ նախ Թաւրիզում և ապա Թիֆլիսում թեմակալ առաջնորդ Մուրադեանի նախագահութեամբ առանձին ձեռնարկ անձինքներից կազմած մասնաժողովի մշակած Ատրպատականի թեմական կանոնադրութիւնը ժամանակաւորապէս հաստատված է գործադրութեան համար իբրեւ փորձ:

Պետերբուրգում մօտ ժամանակներում կը բացվին շինարարութեան արուեստի կուրսեր կանանց համար:

Ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, այն նոր օրէնքը, որ վերաբերում է կենդանիների վարակիչ հիւանդութիւնների դէմ ուղղված միջոցներին, կը սկսվի գործադրվել այս տարվայ յուլիսի 1-ից:

Յունվարի 8-ին Պետերբուրգի դռնապան տաք վիճաբանութիւնների առարկայ էր Պետերբուրգի հիմնարկութեան 200-ամեայ յօբելանսի տօնախմբութեան հարցը: Ամենից առաջ քննվեց, ինչպէս հաղորդում են լրագիրները, յօբելանսեան մասնաժողովի առաջարկութիւնը՝ նշանաւոր կացութեան վրայ տնոյ՝ հիմնելով մի մարդը չարք կրթական հաստատութիւնների ժողովրդի համար: Երկուր վիճաբանութիւններէ յետոյ դռնապան որոշեց 6 միլիօն ռուբլու փոխառութիւն անել և այդ գումարով չինել դպրոցական շինութիւններ 25,000 երեխաների համար: Բացի դրանից որոշված է 1903—1904 ուսումնարանական տարվանից ուսումը դարձնել ձերբ իւր միայն տարրական դպրոցներում, այլ և քաղաքային չորս դասարանական ուսումնարաններում:

Պետերբուրգի մեզ գրում են. «Հաստատ աղբիւրներից տեղեկացել ենք, որ մի խումբ ուսանողներ Պետերբուրգում հրատարակելու են մի ճորտ գեղարուեստական հանդէս՝ նոյն ծրագրով ու զերբով, ինչ որ էր «Արաքս» հանդէսը հանգուցեայ Ս. Գուլամիրեանցի, միայն աւելի լուրջ գիտական և գրական բաժնով, որին մասնակցելու են հրաւիրվում մեր գրական յայտնի ոյժերը վարձատրութեամբ: Որքան ցանկալի է տեսնել այս միտքը իրագործված, մասնաւորապէս այժմ, երբ զգալի է գեղարուեստական հանդէսի պակասութիւնը մեր գրականութեան մէջ: Անկեղծ արտով ողորմում ենք պարոնների եռանդը ու ցանկանում աջակցութիւն:

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Ռուսաց լրագիրներից անշուշտ կիսմաշ, որ ապագայ 1905 թուի օգոստոսի 12—27-ին Սիւտերինսուլա քաղաքում գումարվելու է XIII Հնազանդական ժողովը, որի նախապատրաստական կօմիտեը նիստեր ունեցաւ այստեղ ներկայ 1903 թ. յունվարի 4-ին և 5-ին Մոսկվայի Կայսերական Հնազանդական ընկերութեան շինութեան մէջ, իսկ երրորդ նիստը յունվարի 6-ին կոմսուհի Ուլարովայի մօտ: Կօմիտեի զբաղմունքներին մասնակցելու համար Մոսկվա էին եկել յիշեալ օրերը բազմաթիւ ներկայացուցիչներ զանազան հասարակարաններից, հոգևոր ձեռնարաններից, հնազանդական ընկերութիւններից և այլ բարձր ուսումնարաններից կողմից: Գործունէութեան ծրագրի մշակութիւնից յետոյ, որ շատ հարուստ է և չուտով պիտի հրատարակվի տասնմէկ տետրով, պարզվեց, որ XIV-ը ժողովի գումարման տեղի համար երեք առաջնորդութիւն է եղել. Եկատերինբուրգից, Չերնիգովից և Թիֆլիսից: Հաւանական է, որ XIV-ը ժողովը գումարվի Եկատերինբուրգում, իսկ հետեւեալ գրանից յետոյ կամ Չերնիգովում կամ Թիֆլիսում, նպելով թէ որ քաղաքը աւելի նպաստաւոր պայմաններ կառավարի էր հնութիւններով և ներթափանց օժանդակութեամբ, որով կարելի լինի բեղմնաւոր կացութեանը ժողովի զբաղմունքները: Եթէ ապագայում Թիֆլիսի բախտը բանի, Մոսկվայի Կայսերական Հնազանդական ընկերութեան Թիֆլիսի ճիւղը շատ անկեղծ ունի. նրա հայ և վրացի անդամները ժամանակ կունենան լաւ պատրաստվելու ժողովի հանդիսաւոր օրերին: Ապագան ցոյց կը տայ մեզ, թէ որ չափով ճա-

նաչում են նրանք իրանց հայրենի հնութիւնները, Թիֆլիսի ճիւղի բացվելուց յետոյ լինէ՞աւաջադիմութիւն է արել Կովկասում հայրենազորութիւնը տեղական ազգերի և ցեղերի մէջ: Գլխաւոր մրցակիցները, անկասկած, հայերը և վրացիք պիտի լինեն: Նախապատրաստական կօմիտեի զբաղմունքներին, ի միջի այլոց, հայերից մասնակցելին՝ պրօֆէսոր Գր. Խալաթեանց, Լազարեան ձեռնարանի մասնագիտական դասարանների կողմից և Ո. Յովհաննիսեանց—Մոսկվայի Կայսերական Հնազանդական ընկերութեան կողմից»:

ՀԱՒՐՈՒԹ գիւղից մեզ գրում են. «Մեք-լուէնցան և հազը մեծ նեղութիւն են պատճառում մանաւանդ մանուկներին և ծերերին»:

ՆՈՐ-ԱՅՍԵՂԻՏԻՑ մեզ գրում են. «Ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, անցեալ 1902 թվից տեղիս գործակալ Խորէն վարդապետ Մուրադեանի ջանքերով նորից բացվեց մի քանի տարի փակված պ. Բատիկեանի անունով գոյութիւն ունեցող գրադարանը: Բայց, դժբաղդաբար, մեր ռուսականացեալ երիտասարդները հաւաքեցին խիստ չնչին գումար, որը կարողացաւ պահպանել գրադարանի գոյութիւնը 5 թէ՛ 6 ամիս միայն. նրանից յետոյ գրադարանը, փող չունենալով լրագիրների և գրադարանատէրերի տալու, կրկին ստիպված եղաւ իր դռները փակել ռուսականացեալ երիտասարդների առաջ: Այդպէս հարցը քնեց, և այսօր նա ուղղում է նորից արթնանալ: Կարծես այս արդեօք կատարեալ աջողութեամբ: Կասկածելի է: Խօսում են, բայց խօսքից դուրս չեն անցնում: Անդամավճար երկու ռուբլի է տարեկան»:

ԵԿԱՏԵՐԻՆՆԱՅԻՆ մեզ գրում են. «Վերջապէս յունվարի 5-ին, Ծննդեան դէպքեր առաջին անգամ եկեղեցում երեք պ. Լ. Եղիազարեանի կազմած քառաձայն խումբը: Խումբը երգում էր միջակ: Այդ խումբը պատմաբանութեամբ էր արդէն 3 ամիս, որից ամիս ու եկ տոբոլում էր եւրօպական նօտաներ, իսկ մնացեալ ժամանակում սովորեց պատարագը: Խումբը բաղկացած է մօտ երկուսու մեծի 40 հոգուց: Խմբի անդամներից 12 հոգի «Պրոհորդ» մեծ շրջելով ժողովներից մօտ 200 ռուբլի, որը առաջվայ ունեցած գումարի հետ միասին կը կազմէ մի գումար, որով խումբը կարող կը լինի լաւ հիմունքների վրա դնել նոր սկսած գործը, աւելի լայն ծաւալ տալով նրան: Ի սրտէս չնորհաւորում եմ պարոնների և օրիորդների սկսած գործը, աջողութիւն և վարձատրութիւն ցանկալով»:

Ձերբայէլի գաւտոնի ՀԱՒՐՈՒԹ գիւղից մեզ գրում են. «Մեր գիւղի ժողովրդական պետական երկրաստան դպրոցում յունվարի 7-ին երեկոյեան կայացաւ տոնածառ: Աշակերտները կարգապահ ոտանավորներ, երգեցին խմբակայ երգեր ուսանց և հայոց լեզուներով: Բացի երկու հարիւրի չափ աշակերտներից ներկայ էին շատ հանդիսականներ: Ներկայ էր և զինուորական երաժշտական խումբը: Բոլոր աշակերտներին վիճակահանութեամբ ընծաներ տրվեցին—դասադրքեր, մատիտներ, տետրակներ և փաթեթի մէջ քաղցրաւէիներ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

—Կ. Պոլսից գրում են «Est-Ouest» լրագրին, թէ սուլթան Աբդուլ-Համիդ արգել գրել վերջացել է իր յիշողութիւնները, որոնք պէտք է հրատարակվին նրա մահից յետոյ: Իր յիշողութիւնների մէջ սուլթանը պատմում է այն քաղաքական անցքերը, որոնք տեղի են ունեցել նրա թագաւորութեան օրերում: Յիշելով կատարված փաստները, ինչպէս, օրինակ, պետութեան զանազան մասերի կորուստը, քրիստոնեաների կոտորածը Թիւրքիայում և այլն, հենց ինչպէս, ինչպէս ստում են, աշխատում է ամեն բանի մէջ արդարապէս իրան և մեղքը գցել իր հրամանների անբարեխիղճ կամ անընդունակ կատարողների վրա: Հայերի կոտորածի մէջ Աբդուլ-Համիդ մեղադրում է մի ուրիշ պետութեան:

—Բօլշաքական լրագիրները հաղորդում են, թէ մակեդոնական երկու հակառակ կօմիտետների մէջ այժմ տեղի են ունենում բանակցութիւններ, որոնց նպատակն է գործունէութեան ընդհանուր ծրագրի մշակել գարնան գաղութացումը:

—Յունվարի 5-ին Բրիտանիայում վարձանակեց Մանդատ-Ֆայան, սուլթանի փեսան, որ ժամանակին մեծ աղմուկ հանեց քաղաքական շրջաններում իր փախուստով: Կ. Պոլսից Մահ-

մադ-փաշան 49 տարեկան էր: Նա Ալի-փաշայի որդին էր և ամուսնացած էր սուլթան Աբդուլ-Մէջիդի աղջկայ՝ Սեմիայի հետ և նրանից ուներ երկու որդի: Ֆինանսների մինիստր եղած ժամանակ նա ըստ արժանւոյն վայելում էր անկաշառ և աղին: Մարդու համար Լինելով ռէֆորմների և առաջադիմութեան կողմնակից և մինիստր եղած ժամանակ իրաւունքների հաւասարութեան քարոզիչ բոլոր ազգերի համար, որոնք ապրում են թիւրքաց պետութեան մէջ, նա չէր կարողանում հաշտվել այն ճնշման հետ, որի տակ ապրում է թիւրք ժողովուրդը, և 1899 թվականի դեկտեմբերի 15-ին, վերջնելով իր հետ իր երկու որդիներին, փախաւ: Կ. Պոլսից, որ դոնէս սրանով բողոքէ այն անարդարութիւնների դէմ, որոնց խանգարել չէր կարող: Թիւրք կառավարութեան բոլոր ջանքերը համոզելու նրան, որ վերադառնայ Կ. Պոլիս, ապարդէւն անցաւ: Բայց այն բոլոր վշտերը, որ նա կրեց Կ. Պոլսում, և կենսի կերպն ու եղանակը փոխելու պատճառով ներառեցին չափազանց զրգոտվող քաղաքային այդ նշանաւոր մարդու առողջութիւնը և նա միտաւ չաքարային հիւանդութիւնից, որով տանջվում էր վաղուց:

—Նորերս արտասահմանեան մամուլի մէջ տպվեց մի տեղեկութիւն, որ Թէհրանի նահանգապետը, պրինց Էնի-Դօուլէ, որպէս անգլիացիների ազդեցութեան տակ ընկած, արձակված է պաշտօնից: Շահի հրամանով, սակայն Անգլիայի հովանաւորութեան չնորհիւ, Էնի-Դօուլէ նշանակվում է այժմ Պարսկաստանի հարաւային նահանգներից մէկի ընդհանուր նահանգապետ: Հեղինակաւոր աղբիւրից մեր ստացած տեղեկութիւնների համաձայն, ստում է «НОВОЕ ВРЕМЯ» լրագիրը, այդ բոլոր լուրերը զուրկ են որ և է հիմքից: Պրինց Էնի-Դօուլէ, Շահի ընտանիքի անդամներից մէկը, Պարսկաստանի միապետի կատարեալ վստահութիւն է վայելում և անպայման մտացածին են այն լուրերը, որ նա իր թէ՛ արձակվում է Թէհրանի նահանգապետի պտշտօնից, նոյնպէս և այն լուրը, որ նա ընկել է անգլիական ազդեցութեան տակ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

14 յունվարի

ՁԻՐՈՒՏԻՆ Նահանգապետը ծանուցում ատացաւ, որ Մէնէլէի գալը յետաձգված է:

ՏՈՒՆԱ: Յունվարի 13-ին րեազան-ուրախեան երկաթուղու Պոնտաբուլ-Դանաբուլ կայարանի մօտ, ապրանքատար քիցքաւոր խորտակվեց, ընկնելով կամուրջից: Մեքենավարը, օգնականը և իւր քաղը ծանր կերպով վրաւորվեցին, զիւրաւոր կօնդուկուսը չէ գտնված:

ՅԻՒԼՊՈՂՈՂ, Պարզվում է, որ Սադե-փաշան պահանջում էր մեծ ինքնառոյնութիւն իր գործողութիւնների մէջ և անմիջական կօնքորով մինիստրների վրա և նախատեսելով մերժումն սուլթանի կողմից, հրաժարական տուեց:

ՍՕՖԻԱ: Ֆինանսների մինիստրը մտքից առաջադրութիւն եղջիւրաւոր անասունների վրա մաքսահարկի օրէնքը վերացնելու մասին: Ազատարար պատերազմի ժամանակ սպանվածների համար մատուցելիքատակարար կատուցանող յանձնաժողովը հաւաքեց 100,000 Ֆրանկ:

ՅԻՒԼՊՈՂՈՂ, Ձէմիլ-բէյ փախաւ Ալլոնայից: Իտալիա իտալական շոգնաւով, և թիւրքերը չը կարողացան ձերբակալել նրան: Այդ դէպքը շատ խօսակցութիւնների տուարկայ է:

ՊԱՐԻՉ: Ժուրնալիստ Դէնու «Soleil» լրագրում մի յօդուած նուիրեց Ռուսաստանը և Ֆինլանդիա ըրօշիւրին: Նա նկատում է, որ ֆինլանդական հարցը առաջին ամսին է, որով կամենում էին Ֆինլանդիայի ֆրանս-ռուսական դաշնակցութիւնը: Ֆինները կասկածելի պաշտպաններ ունեն Յրանսիայում, որոնք միտում են գործին:

ՄԻՆԻՍԿԻ: Պահեստի օֆիցէրների ճաշին կայսրի ծննդեան առիթով պրինց Լիւսլովի ճառարտասանեց և յիշեց կայսրի այցելութիւնը նիւ-բերլինի թանգարանին, մի և նոյն ժամանակ նկատեց, որ գերմանական ժողովրդի մասնակցութիւնը կառուցմանը ցոյց տուեց, որ Գերմանիայում ոչ զբի մտքում չէ անցնում են թարակվել իրրեդէնտիստի և որ ամենքը, իրանց միապետների հաւատարիմ հպատակներ լինելով, ցանկանում են Գերմանական կայսրութեան հաւատարիմ քաղաքացիներ լինել:

ՄԱՐԻԻԴ: «Imparcial» հաղորդում է, որ թեկնածուն բոլորովին մօտ է կանգնած Ֆէ-ցինա Սուլթանի դօրքը աշխատում է յարձակվել աջ թեկից:

ԿԱՆԿՈՒՏՏԱ: Մէյստանի սահմանորոշ արշաւախումբը անցաւ աֆղանական սահմանը և

հասաւ Կանախ Լուր է պտտում, որ էմիրը ցանկանում է այցելել Հնդկաստանի փոխարքային:

ՎԻՆՆԱ: Ի հերքումն այն հաղորդագրութեան, որ իբր Էթէ Միացեալ-Նահանգների և Մէքսիկայի միջև եղած վէճի առիթով Հաագայի միջնորդ դատարանի վճիռը նստել է 2000,000 Ֆրանկ, միջազգային դատարանի անգամ Հաագայում պրօֆէսոր Լամաշ կայտարարում է, որ այդ վճիռը նստել է 130,000 Ֆրանկ, չը հաշուելով երկու կողմերի փաստաբանների ծախսերը:

Կ. ՊՈԼԻՍ: Շէյքըին, Միաբուլիցայի ռուսական հիւպատոսը, ժամանեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Յունվարի 14-ին, գերմանական կայսրի ծննդեան օրը, Չերնիգովի պալատում կայացաւ նախաճաշ, ներկայութեամբ Թագաւոր Կայսրի, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդօրօւնայի, Մեծ Իշխան Թագաւորական զինուորական գեապանութեան անդամների, Թագաւոր Կայսրը գերմանական կայսրի կենացն առաջարկեց:

15 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդօրօւնայի հովարտակով Մեծ Իշխանուհի Ալէքսանդրա Ֆեօդօւնա հաստատված է առաջիկայ եռամեակի համար Կայսրուհի Մարիայի հիմնարկութիւնների վարչութեան մանկական ապաստարանների Պետերբուրգի խորհրդի նախագահուհի:

ԿԻԵՎ: Թագաւոր Կայսրը, Ֆինանսների մինիստրի գեկուցման համեմատ, Բարձրագոյն հրամայեց՝ պետական գանձարանից բաց թողնել 30,000 ռուբլի ի նպաստ ուղղափառ եկեղեցու ոգով կրօնա-քարոյական լուսաւորութիւն տարածող Կիեւի ընկերութեան:

ԼՕՆԴՈՆ: Լինչի մահվան դատավճիռը փոխարինված է մշտական բանտարկութեամբ զապէլ տան մէջ:

Կ. ՊՈԼԻՍ: Սուլթանի իրադէն հրամայում է հեռագրական գիծ անցկացնել Փոքր-Ասիայի ռուսական սահմանի երկարութեամբ և միացնել այդ գիծը թիւրքական զիւրաւոր կետերի հետ:—Սկուտարիի վալիին հրամայված է նոյնպէս ձեռնարկութիւն սկսել չէրնօքօրիական սահմանի վրա, որպիսիք իրագործված են սերբիական սահմանի վրա, այն է հեռագրական գծերի կառուցման աւարտումն, նոր բլօկ հաւաքների կառուցումը և սահմանապահ զինուորների թիւի աւելացնելը:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Լուր է պտտում, որ Բօուէն առաջարկել է Վենեսուէլայի անունից, որպէս ապանովութիւն, մաքսահարկերի 30% Պուէրտօ-Կաբէլլօում և Լազուայրում: Մաքսահարկերը կանխէ այն յանձնաժողովը, որի մէջ իւրաքանչիւր պետութիւն կը նշանակէ իր ներկայացուցիչը:

ԼՕՆԴՈՆ: Գծանցի մէջ առաւօտեան 5 ժամ 30 րօպէին հրդէն սկսվեց այն բաժանմունքը, ուր գտնվում էին 600 հրէուհիներ: Այդ վեցին 60. ասում են, որ շատերը փախան. նրանց չեն կարողանում գտնել:

ՍՕԿՀՈՒՄ: Շվեդ-սօւիէական մինիստրների խորհրդի միացեալ նիստում Թագաւորական պրինցը ընդունեց խնամակալութիւնը:

ՊԱՐԻՉ: Արմանի գեկուցումը զինուորական մինիստրութեան բերդէտի վերաբերմամբ յունվարի 14-ին կը բաժանվի պարլամենտի անդամներին: Նա այն կարծիքն է յայտնում, թէ պէտք է մտցնել զինուորական ծառայութեան երկամսյա ժամանակամիջոց մի ամսվայ արձակուրդով տարվայ մէջ: Ծառայողութիւնը կը շարունակվի 22 ամիս: Այդ բանը հնարաւորութիւն կը տայ ծառայութեան մէջ ընդունել կիսապէտքական մարդկանց, որոնք մնացածներին կազատեն ոչ-զինուորական աշխատանքներից և նրանց հնարաւորութիւն կը տան նուիրել իրանց բացառապէս զինուորական զբաղմունքներին: Խաղաղ ժամանակ գէնքի կանչված կը լինեն 600,000, իսկ պատերազմի ժամանակ Յրանսիան հէնց առաջին ակնարկին մէկ միլիօնից աւելի զինուորներ կունենայ: Զեկուցանողը այն կարծիքն է յայտնում, թէ պէտք է թնդանօթածիղ զօրքը մեծացնել և արմատական ռէֆորմներ մտցնել հեծելազօրքի մէջ:

ԽՈՐԱԳԻՐ ԱՎԵՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԲ-ԱՆԱՄԱԽԱՆ

21—35